ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 08 -Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 69-րդ և ,,Բյուջետային համակարգի մասին,, օրենքի 35-րդ հոդվածներին պահանջներին համապատասխան.
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի 2015 թ բյուջեի կատարման վերաբերյալ Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանին՝
ա/.ավելի ակտիվացնել աշխատանքները՝ հողի և գույքի հարկերի բազաների ճշտգրկման, տեղական հարկերի հավաքագրման ուղղությամբ:
Այդ աշխատանքներում ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն ու թափանցիկություն:
բ/.անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի կատարման և համայնքի զարգացման ծրագրի կատարման ուղղությամբ:
գ/.բարձրացնել աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների ղեկավարների պատասխանատվությունը՝ համայնքի 2016 թ բյուջեի եկամուտների հավաքագրման գործում պատշաճ մասնակցություն դրսևորելու, բյուջեի կատարումն ապահովելու, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային ծախսման ուղղությամբ:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ապարանի քաղաքային համայնքի 2015 թ բյուջեի կատարման ուղղությամբ տարված հետևողական աշխատանքների շնորհիվ ապահովել է տարեկան պլանային ցուցանիշների կատարումը, որի արդյունքում ապահովել է համայնքի կենսագործունեության բնականոն գործունեությունը: Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Ավագանու որոշումները, քաղաքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, տեղական հարկերի և վճարների օրենքով մուտքերը, քաղաքապետարանի գործունեության հիմնական ուղղություններն ընդգրկված են համայնքային կայքում, որը հասու է համայնքի յուրաքանչյուր բնակչի:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել հողի և գույքի բազաների ճշգրտման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման ուղղությամբ:

Ամենօրյա աշխատանքներ են տարվել համայնքի բյուջեի մուտքերի ապահովման, ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման ուղղությամբ:

Համայնքի սեփական եկամուտների ապահովման գործում տարվել է ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ:

Համայնքի 2015 թ բյուջեն պլանավորվել է հետևյալ ցուցանիշներով՝

ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	ՀՀ դրամ
ՀՀ Կառավարության կողմից տրվող դոտացիան	103.148,8
ՀՀ Կառավարության կողմից տրվող այլ դոտացիան	19.916,6
Համայնքի վարչական մասով սեփական եկամուտներ	53.000,0
ՀՀ Կառավարության կողմից տրվող ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր	5.538,7
ՀՀ կառավարության կողմից արվեստի դպրոցին տրվող սուբվենցիա	4.001,0
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝	185.605,1
Համայնքի ֆոնդային մասով եկամուտներ	10.000,0
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ՝	195.605,1

2015 թ սեփական եկամուտների կատարման արդյունքները՝

Հ/Հ	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ	ԿԱՏԱՐՎԱԾ /ՀԱԶ.ԴՐԱՄ/	ԿԱՏԱՐՄԱՆ %
1	Հողի հարկ	8000,0	8153,9	101,9
2	Հողի և գույքի վարձակալություն	3500,0	3947,8	112,8
3	Գույքահարկ՝	19000,0	22069,3	116,2
4	Տեղական տուրքեր և վճարներ	4000,0	4456,6	111,4
5	Պետական տուրքեր	2600,0	2145,2	82,5
6	Վարձավճարներ	15600,0	17128,8	109,8
7	Վարչական տուգանք	300,0	200,0	66,7
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ		53.000,0	58101,5	109.6
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ		10.000,0	2538,8	25,5
ԸՆԴԱՄԵՆ ԲՅՈՒՋԵՆ		63.000,0	60640,3	96,3

Հարկային պարտավորությունները խախտած 11 ֆիզիկական անձանց նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ, 24 հարկատուների հետ կազմել է պարտքերի աստիճանական մարման ժամանակացույց, որոնցից 6-ն ամբողջությամբ մարել են պարտքերը:

Համապատասխան օրենքների կիրառման արդյունքում հարկային արտոնություններ **են տրվել** 57 քաղաքացիների՝ 1.122.616 **դրամի չափով**, որոնցից 41-ին՝ հողի հարկի (771.553 դրամ), **իսկ 16 –ին՝ գույքահարկի (351.063 դրամ) մասերով, նրանցից 17-ը (254.189 դրամ) զոհված ազատամարտիկների ընտանիքներ են**

Օրենքի համաձայն զիջվել են 8 զինծառայողների ավտոմեքենաների գույքահարկը՝ 422.000 դրամի:

Վարձավճարների զեղչեր են կիրառվել մանկապարտեզներում և արվեստի դպրոցում՝ միակողմանի և երկողմանի ծնողազուրկ, բազմանդամ ընտանիքների երեխաների ուսման վարձավճարների ուղղությամբ:

Միաժամանակ, համայնքի բյուջեի ձևավորման, տեղական հարկերի, տուրքերի ու վճարների հավաքագրման գործում դեռևս կան թերություններ:

Դեռևս մեծ թիվ են կազմում պարտքատերերը, որոնց մի մասը համայնքից երկար տարիներ բացակայողներ են **և ժառանգությունը չբացված մահացածներ:**

288 **բացակայողներն** ունեն շուրջ 565 հողաբաժին և գույք , 274 մահացածների **անունով առկա են 655 անուն հողաբաժին և գույք:**

Դեռևս քիչ չեն նաև այն քաղաքացիները, ովքեր ամենատարբեր պատճառներով չեն վճարում հարկերը:

Որոշակի խնդիրներ կան տեղական տուրքերի ժամանակին հավաքագրման գործում, առևտրով զբաղվող առանձին ձեռներեցներ դեռևս դժվարությամբ և ծգծգումներով են վճարում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության տեղական տուրքերը:

Հարկային տեսչությունից տաքսի ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ բազայի չտրամադրման պատճառով տեղական տուրքեր չեն գանձվել տաքսի ծառայություն իրականացնող սուբյեկտներից:

Ֆոնդային բյուջեի թերակատարման հիմնական պատճառը վաճառքի ենթակա հողատարածքների պահանջարկի բացակայությունն է: 26 տնամերձ և 29 գյուղատնտեսական նշանակության հողամասերի օտարման նպատակով բազմաթիվ անգամներ տրվել են աճուրդ վաճառքի հայտարարություններ, սակայն գնորդների բացակայության պատճառով դրանք չեն կայացել: Պահանջարկ կա համայնքի ներսում հասարակական նշանակության հողամասերի, որի հնարավորությունները սակավ են:

Անհրաժեշտ հսկողություն և հետևողականություն է դրսևորվել ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային ծախսերի ապահովման ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ:

Դրամական օգնություններ են տրվել 110 քաղաքացիների՝ 2.553,0 հազ. դրամի չափով:

Դրամական և նյութական աջակցություններ են ցուցաբերվել հայրենական մեծ պատերազմի վետերաններին, երկրապահ կամավորների և զոհվածների, պատերազմի վետերանների միություններին, հանրակրթական դպրոցներին, ուսանողությանը, ոստիկանությանը, **հրշեջ-փրկարարական ջոկատին,** մարզական թիմերին, հիվանդներին, մահացածների ընտանիքներին, համատիրություններին, լրատվական միջոցներին, սոցիալապես անապահով խավերին՝ **1.300,0 հազ. դրամի չափով:**

Ամեն տարի բոլոր 1-ին դասարանցիներին նվիրվում են պայուսակներ:

Ցուցաբերած դրամական աջակցություններն ու օգնությունները կազմել են՝ 3.850,0 **հազ.** դրամ:

Մանկապատանեկան մարզադպրոցը, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը, մշակույթի

կենտրոնը գործում են անվճար հիմունքներով, որոնցում ընդգրկված են շուրջ 350 երեխաներ:
Համայնքում մշտապես անցկացվում են ավանդական դարձած միջոցառումներ՝
Հին ամանորի տոնախմբություն, մայրության տոն, հաղթանակի տոն, Ապարանի հերոսամարտի տոնակատարություն, շրջանավարտների հավաք, ուսուցչի տոն, բուժաշխատողի տոն, զորակոչիկի օր, ոստիկանության օր, **Փրկչարարի օր**, բազմաթիվ համերգներ, գրական ու երաժշտական երեկոներ, ֆուտբոլի, շախմատի, սպորտլանդիայի, ազգային խաղերի և այլ առաջնություններ, որոնց ընթացքում մասնակիցներին հանձնվել են նվերներ և դրամական պարգևներ:
Համայնքային ենթակայության հիմնարկների կողմից անցկացվում են բազմապիսի միջոցառումներ, որոնք նպաստում են բնակչության հանգստի կազմակերպմանը, երեխաների գեղագիտական և սպորտային և դաստիարակությանը:
2015 թ տարեկան ծախսերը կազմել են 207.732,4 հազ. դրամ՝ պլանավորված 219.429,2 հազ. դիմաց, կամ այն կատարվել է 94,7 %-ով:

2015 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝

N	ՀՈԴՎԱԾԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՊԼԱՆ Հազ. դրամ	ԿԱՏԱՐՎԵԼ Է Հազ. դրամ	ԿԱՏԱՐՄԱՆ %
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	219429,2	207732,4	94,7
1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝**	77220,8	69409,3	89,9
	ՈՐԻՑ՝			
-	**Օրենսդիր և գործադիր մարմինների և պետական կառավարու**	44464,4	43375,1	97,5
-	**Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություններ**	908,0	890,2	98,0
-	**Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ**	26313,5	19609,1	74,5
-	**ՔԿԱԳ բաժնի պահպանում**	**5534,9**	**5534,9**	**100.0**
2	Բնակարանաշինություն և կոմունալ ծառայություն	44136,4	41859,6	94,8
	Որից՝			
-	Բնակարանային շինարարություն	15806,4	14061,6	89,0
	Կոմունալ ծառայություն	28330,0	27798,0	98,1
4	**Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով**	21650,0	20810,0	96,1
	Որից՝			
-	**Գրադարանի մասով**	7955,0	7455,0	93,7
-	**Մշակույթի մասով**	13695,0	13355,0	97,5
5	**Կրթության բնագավառի մասով՝**	72572,0	71805,5	98,9
	Որից՝			
-	**Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝**	26502,0	26382,5	99,5
-	**Նախնական մասնագիտական կրթության բնագավառի մասով՝**	10105,0	10005,0	99,0
-	**Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով**	35965,0	35418,0	98,5
6	**Սոցիալական հատուկ արտոնություններ բնագավառի մասով**	3850,0	3848,0	99,9

Համայնքի զարգացման ծրագրով 2015 թ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- **Գ. Նժդեհի, Մ. Գևորգի, Գայի փողոցներում՝ ասֆալտի 480 քմ փոսային նորոգումներ**
- **Գրունտային ճանապարհների բարեկարգում՝ 4600 քմ**
- **Բնակելի շենքերի բակերի բարեկարգում՝ ասֆալտի քերվածքներով**
- **Թիվ 1 մանկապարտեզի 6 պատուհանների փոխարինում եվրոպական նմուշի պատուհաններով**

- Արվեստի դպրոցի շենքի մասնակի վերանորոգում, 34 պատուհանների փոխարինում նորերով
- Մարզադպրոցի շենքի մասնակի վերանորոգում
- Բաղրամյան 22, Նժդեհի 3 և 13 բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում, Բաղրամյան 17 շենքի տանիքի մասնակի նորոգում
- Ջալալյան, Փոշտեր և Լուսավորի փողոցների գազաֆիկացում
- Հերոսամարտի և Կանայան փողոցներում 300 գծմ ջրահեռացման համակարգի կառուցում
- Վետերանների ակումբի նորոգում
- Քաղաքապետարանի վարչական շենքի, մշակույթի կենտրոնի և ՄՊՍ կենտրոնի շենքերի մասնակի նորոգումներ
- Եկեղեցու ցուցավահանակի տեղադրում
- Գիշերային լուսավորության գործող համակարգերի վերանորոգում
- Գլխավոր փողոցներում կատարվել են գծանշման, երթևեկության նշանների տեղադրման աշխատանքներ:
- Կապիտալ վերանորոգման են ենթարկվել աղբատար և սանմաքրման ավտոմեքենաները, բուլդոզերը, ձեռք են բերվել աղբարկղեր, վերանորոգվել են հները , վերանորոգվել են գիշերային լուսավորության համակարգերը
- Համայնքային կառույցները ապահովվել են անհրաժեշտ գույքերով և սարքավորումներով
- Լուծվել են ընթացիք բազմաթիվ խնդիրներ:

Քաղաքապետարանի գործունեության ապահովման գործում արդյունավետ է եղել համայնքի ավագանու գործարար և համերաշխ աշխատառոը, ձեռնարկումներին սատարելու, ցանկացած խնդիր համատեղ քննարկելու և արդյունավետ լուծումներ գտնելու հարցում:

Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով առկա դժվարությունները ու պրոբլեմները, նախանձախնդիր ենք պահպանելու ձեռքբերումները և անելու հնարավորին առավելագույնը:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 09 -Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2015 Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-ն հրամանի պահանջները և Ապարանի քաղաքապետի կողմից հաստատված 2014-2016թթ ռազմավարական ու 2015թ. տարեկան ծրագրերով, ներքին աուդիտի բաժնի կողմից 2015 թ աուդիտ է իրականացվել Ապարանի քաղաքապետարանում, համայնքային ենթակայության 8 ՀՈԱԿ-ներում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժնում՝ ֆինանսատնտեսական, իրավա- կազմակերպչական, տեղական հարկերի և տուրքերի հավաքագրման և մուտքագրման ուղղությամբ տարված գործունեության վերաբերյալ: Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների, թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ համայնքի ղեկավարի կողմից անցկացվել են քննարկումներ, հաստատվել են գործողությունների ծրագիր, որը հետևողականորեն իրականացվում է:
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2015 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ներքին աուդիտի բաժնին (Ռ.Հարությունյան)՝ բարձրացնել ներքին աուդիտի իրականացման արդյունավետությունը, ապահովել ուսումնասիրությունների անհրաժեշտ խորություն ու բազմակողմանիություն:
3. Քաղաքապետին՝ ուժեղացնել հսկողությունը կատարված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված խախտումների ու բացթողումների վերացման ուղղությամբ, ձեռնարկել անհրաժեշտ և ավելի արդյունավետ միջոցներ հետագայում դրանք բացառելու համար:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գուգիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հաշվետու տարում Ապարանի քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժինը (այսուհետև ներքին աուդիտի բաժին) գործունեությունն իրականացրել է <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-ն հրամանի պահանջներին, ինչպես նաև ներքին աուդիտի բաժնի ռազմավարական և տարեկան ծրագրերին համապատասխան: Տարեկան հաշվետվությունը կազմվել է՝ ելնելով ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-ն որոշմամբ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 974-ն <<Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները հաստատելու մասին>> հրամանով հաստատված 2420-1 <<հաշվետվությունների որակը >> կիրառման դրույթներից:

Համաձայն ներքին աուդիտի բաժնի 2015 թվականի տարեկան ծրագրի՝ տարվա ընթացքում աուդիտ է իրականացվել քաղաքապետարանի աշխատակազմի բաժիններում, համայնքային ոչ առևտրային 8 կազմակերպություններում և քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժնում:

Քաղաքապետարանում և ՀՈԱԿ-ներում իրականացվել է համակարգի գնահատման աուդիտ, ուսումնասիրվելեն 2015 թվականի տարեկան գործունեությունները՝ ֆինանսատնտեսական, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման արժանահավատության, հաստիքացուցակների, կատարված ծախսերի, գնումների կազմակերպման դրվածքի, դրամարկղային կարգապահության, աշխատանքային պայմանագրերի ու ներքին կանոնակարգերի առկայության ու կիրառման վիճակի, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում գործող խմբերում ընդգրկված երեխաների անձնական գործերի, խմբերում պարապմունքների դրվածքի և այլ ուղղություններով:

ՈՒսումնասիրություններին մասնակից են դարձվել նաև առանձին մասնագետներ:

Աուդիտի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմված արձանագրությունները, ըստ կազմակերպությունների, ներկայացվել են Ապարանի քաղաքապետին:

Ստուգումներն ու ուսումնասիրությունները կատարվել են հետևյալ ուղղություններով, արձանագրվել են հետևյալ թերություններն ու բացթողումները՝

1.Մանկապատանեական մարզադպրոց ՀՈԱԿ-ում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության, գնումների գործընթացի կազմակերպման, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների արժանահավատության ստուգման, հաստիքացուցակների,ծախսերի նախահաշվի, աշխատանքային պայմանագրերի և սաների անձնական գործերի ու պահանջվող այլ փաստաթղթերի առկայության գործում թերություններ և բացթողումներ չեն արձանագրվել:

ՈՒսումնասիրությունների պարզվել է, որ դպրոցում ցածր հիմքերի վրա է դրված աշխատանքային կարգապահությունը, շատ են երեխաների բացակայությունները, պարապմունքները ձեռնարկելու համար աշխատանքից ազատվել է դահուկավազքի մարզիչը: Ֆուտբոլի, դահուկավազքի խմբերում ցածր է արդյունավետությունը և որակը:

2.Մանկապատանեական ստեղծագործական կենտրոն ՀՈԱԿ-ում կատարվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ապրանքանյութական արժեքների գնման, մուտքագրման և դուրս գրման գործունեությունը, գնումների գործընթացը, դրամարկղայինն գործունեությունը, աշխատավարձերի հաշվարկման ու վճարման ճշտությունը, իրավական գործունեությունը, գործավարությունը: Արձանագրվել է, որ կազմակերպած ցուցահանդես-վաճառքներում վաճառված աշխատանքների հաշվառում չի տարվում, ինչպես նաև վաճառքից գոյացած միջոցները չեն մուտքագրվել արտաբյուջետային հաշվին և ծախսվել սահմանված կարգով:

3.Քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, տրանսպորտի և սպասարկման բնագավառում գործող առևտրի 3 օբեկտներ ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի թույլտվության համար չեն մուծել տեղական տուրքեր, որը արտացոլված է ապառքների ցանկում, տեղական տուրք չի գանձվել տաքսի ծառայություն մատուցող սուբեկտներից, արտաքին գովազդի համար տուրք չեն վճարել 4 կազմակերպություն: Գանձված տուրքերից պակաս է մուծվել բանկ 2130 դրամ, որը մուծվեց ստուգման ընթացքում: Երբեմն գանձված հարկերի և տեղական տուրքերի գումարները բանկ են մուծվել 4-5 օր ուշացումներով:

4. Քաղաքապետարանի արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում կատարվել է հատկացված բյուջետային միջոցների և ծախսերի վերլուծություն, ստուգվել է ծնողական միջոցների գանձման և մուծման ճշտությունը, գնումների գործընթացը, աշխատանքային կարգապահությունը, հաշվապահական հաշվառման դրվածքը: Նկատվել են հետևյալ թերությունները՝ չի կազմակերպվել սաների կողմից կատարված լավագույն աշխատանքների ցուցահանդես- վաճառք, թերություններ է նկատվել ուսման վարձերի գանձման անդորագրերի լրացման և չեղյալ համարվելու գործում:

5.Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ուսումնասիրվել է մանկապարտեզի ընդհանուր վիճակը և հարմարությունները, հաստատված հաստիքացուցակի, տարիֆիկացիայի և ծախսերի նախահաշվի առկայությունը, կրթադաստիարակչական գործունեության կազմակերպումը՝ նախադպրոցական կրթական ծրագրերի առկայությունը, երեխաների խնամքի ապահովումը, կատարվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, ստուգվել է աշխատավարձերի ու անաշխատունակության թերթիկներով վճարվող նպաստների հաշվարկման ու վճարման ճշտությունը, ապրանքանյութական արժեքների և սննդամթերքների հաշվառման վիճակը, վերլուծվել է ֆինանսատնտեսական գործունեությունը, երեխաների ծնողական վճարների գանձման և մուծման ճշտությունը, դրամարկղային գործունեությունը և իրավաբանական ու կադրերի հետ տարվող աշխատանքները: Հաշվապահական հաշվառման գրքում սննդամթերքների գրանցումները կատարվել են միայն գումարային եղանակով, մինչդեռ այն պահանջվում է կատարել քանակագումարային եղանակով, ծնողական մուծումների համար չօգտագործված անդորագրերը սահմանված կարգով չեղյալ չի համարվել և վերադարձվել քաղաքապետարանի ֆինանսական բաժնին, չի կազմվել և ֆինանսական բաժին չի ներկայացվել գանձված ծնողական մուծումների անդորագրերի ամփոփագրերը: Մանկապարտեզը տեղավորված է հարմարեցված շենքում, չի ապահովվում պահանջվող նորմաները:

6.Քաղաքապետարանի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ուսումնասիրվել է մանկապարտեզի ընդհանուր վիճակը, հաստատված հաստիքացուցակի, տարիֆիկացիայի, ծախսերի նախահաշվի առկայությունը, ուսումնասիրվել է կրթադաստիարակչական գործունեության կազմակերպումը, նախադպրոցական կրթական ծրագրի առկայությունը և երեխաների խնամքի ապահովումը, գույքագրվել է ակտիվները և պարտավորությունները, աշխատավարձերի և անաշխատունակության թերթիկներով վճարվող նպաստների հաշվարկման ու վճարման ճշտությունը,

ապրանքանյութական արժեքների և սննդամթերքի մուտքագրման և դուրս գրման ճշտությունը, երեխաների ծնողական միջոցների գանձման և մուծման ճշտությունը, դրամարկղային գործունեությունը, իրավական գործունեությունը և կադրերի հետ տարվող աշխատանքները: Այստեղ նույնպես նկատվել են այն նույն թերությունները, ինչն արձանագրվել է թիվ 1 մանկապարտեզում:

7. Գրադարան ՀՈԱԿ-ում կատարվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ստուգվել է հաստատված հաստիքացուցակների և ծախսերի նախահաշվի առկայությունը, անցկացվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, ուսումնասիրվել է ապրանքանյութական արժեքների գնման և ներքին շարժի փաստաթղթավորումը, հաշվապահական հաշվառման դրվածքը և հաշվետվությունների արժանահավատությունը, ստուգվել է դրամարկղային գործունեությունը, իրավական և կադրերի հետ տարվող աշխատանքները: ՈՒսումնասիրություններից թերություններ չի հայտնաբերվել:

8.Մշակույթի կենտրոն ՀՈԱԿ -ում կատարվել է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ստուգվել է հաստատված հաստիքացուցակի և ծախսերի նախահաշվի առկայությունը, անցկացվել է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, ապրանքանյութական արժեքների գնումների և ներքին շարժի փաստաթղթավորում, հաշվապահական հաշվառման դրվածքը և հաշվետվությունների արժանահավատությունը, դրամարկղային գործունեությունը, իրավական գործունեությունը և կադրերի գործը:
Պարզվել է հետևյալը՝ ծախսերի ֆինանսավորումը ամբողջությամբ կատարվում է համայնքի բյուջեի հաշվին: Այնինչ, մշակույթի կենտրոնը ինչպես քաղաքում, այնպես էլ հարևան համայնքներում չի կազմակերպվել վճարովի ցուցահանդեսներ, համերգներ ու թատերական ներկայացումներ, որպեսզի ապահովի արտաբյուջետային միջոցներ: Դեռևս չի գործում թանգարանը:

9.Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ում կատարվել է 2014 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, ստոգվել է հաստիքացուցակի և ծախսերի նախահաշվի առկայությունը, աշխատողներին աշխատանքի ընդունման և ազատման գործընթացը, կատարվել է կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների գույքագրում, ուսումնասիրվել է կազմակերպության սպրանքանյութական արժեքների ներքին շարժի փաստաթղթավորումը, ստուգվել է աշխատավարձերի և անաշխատունակության թերթիկներով վճարվող նպաստների հաշվարկման և վճարման ճշտությունը, դրամարկղային կարգապահությունը և աղբահանության համար գանձված և մուծված գումարների ճշտությունը:
Ստուգումից և ուսումնասիրություններից պարզվել է հերևյալը՝ որոշ անհատ ձեռնարկատերեր աղբահանության ուղղությամբ ունեն զգալի պարտքեր, իսկ 5 անհատ ձեռնարկատեր չեն կնքել աղբահանության պայմանագրեր և աղբը հեռացնում են ինքնուրույն, որի համար վարչական պատասխանատվության չեն ենթարկվել, հեղուկ գազով աշխատող մեքենաների համար չի մշակվել նորմա մեկ կիլոմետր վազք կատարելու համար պահանջվող գազի քանակի համար:
Աղբահանության գումարների գանձման մի շարք անդորագրեր գրվել են ջնջումներով և անընթեռնելի:

10.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժնում կատարվել է պետական տուքերի գանձման և մուծման ճշտությունը, ստուգումներից խախտումներ և թերություններ չի հայտնաբերվել:

Ներքին աուդիտի առաջադրանքների, ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Արձանագրություններում տեղ գտած բացահայտումների ու եզրակացությունների հիման վրա կազմվել է գործողությունների ծրագիր, որում թերությունների վերացման համար տրվել են կոնկրետ ժամկետներ:

Գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգեր արդյունավետությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և քաղաքապետարանի գործունեությանը առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլն) քաղաքապետարանի ենթակա կազմակերպությունների ու աշխատակազմի բաժիների գործունեությունը բարելավելու համար ներկայացվել է մի շարք առաջարկություններ, որոնք ամփոփվել են գործողությունների ծրագրերում:
Աուդիտի ենթարկված կազմակերպություններին արվել են առաջարկություններ՝

1.Մանկապատանեսական մարզադպրոց ՀՈԱԿ- Մեծ ուշադրություն դարձնել ուսումնա դաստիարակչական աշխատանքների վրա, բացառել երեխաների անհարգելի բացակայությունները, մեծ ուշադրություն դարձնել աշխատողների աշխատանքային կարգապահության վրա:

2.Մանկապատանեսական ստեղծագործական կենտրոն ՀՈԱԿ- Առաջարկվել է սաների կողմից կատարված լավագույն աշխատանքները ցուցադրել քաղաքային մասսայական միջոցառումների ժամանակ և կազմակերպել ցուցահանդես վաճառք, վաճառքից գոյացած գումարները մուտքագրել արտաբյուջետային հաշվին և ծախսել ՄՊՍ կենտրոնի գործունեության հետագա բարելավման նպատակով:

3.Քաղաքապետարանի աշխատակազմին՝ առևտրով զբաղվող այն Ա/Ձ-ները, որոնք զբաղվում են ալկահլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով և դրանց վաճառքի թույլտվության համար չեն մուծել տեղական տուրք, համաձայն վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքի 169/16 կետի ենթարկել վարչական պատասխանատվության: Առաջարկվել է յուրաքանչյուր տարի կազմել աշխատանքային պլան և համաձայն դրա կատարել ստուգումներ առևտրի և հասարակական սննդի օբեկտներում ժամկետանց ապրանքների առկայության ու առևտր կանոնների պահպանման ուղղությամբ՝ օրենքով ՏԻՄ-երին լիազորված մասով:
Համաձայն Տեղական տուրքերի և վճարների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ կետի՝ տեղական տուրք գանձել համայնքի տարածքում գործող տաքսի ծառայություններից, միջոցներ ձեռնարկել, որպեսզի գանձվեն արտաքին գովազդի համար սահմանված տուրքերը բոլոր կազմակերպություններից:
Առաջարկվել է գանձված տուրքերը և հարկերը ժամանակին մուծելու բանկ:
ՈՒժեղացնել հսկողությունը քաղաքում կատարվող շինարարությունների նկատմամբ, հայտնաբերել ապօրենի կառույցները և աշխատանքներ տանել դրանց օրինականացնելու ուղղությանբ:
Հիմնական միջոցների գրանցման և հաշվառման գրքում լրացնել գույքի սկզբնական արժեքը, կուտակված մաշվածությունը և մնացորդային արժեքները, հաշվառումը կատարել հիմնական միջոցների հաշվառման համար սահմանված գրանցման գրքով:

4.Արվեստի դպրոց ՀՈԱԿ- Առաջարկվել է ուսման վարձերի անդորագրերը լրացնեն առանց ջնջումների և ընթեռնելի, իսկ սխալ գրված և չօգտագործված անդորագրերը սահմանված կարգով չեղյալ համարել, սաների կողմից կատարված աշխատանքները ցուցուցադրել ազգաբնակչությանը, կազմակերպել ցուցահանդես- վաճառք և վաճառքից գոյացած դրամական միջոցները մուտքագրել արտաբյուջետային հաշվին և այն օգտագործել դպրոցի գործունեության հետագա բիարելավմանը:

5.Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ- Առաջարկվել է սննդամթերքների հաշվառումը և գրանցումը կատարել քանակագումարային եղանակով, ծնողական մուծումների լրացված անդորագրերի համար կազմել ամփոփագիր և ներկայացնել ֆինանսական բաժին:

6.Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ- Առաջարկվել է քաղաքապետարանից առանձնացնել մանկապարտեզի էլ. էներգիայի և գազի հաշվիչները, որպեսզի պարզվի մանկապարտեզի փաստացի կատարված ծախսերը, սննդամթերքների հաշվառումը և գրանցումը կատարել քանակագումարային եղանակով, ծնողական մուծումների լրացված անդորագրերի համար կազմել ամփոփագիր և ներկայացնել ֆինանսական բաժին:

7.Գրադարան ՀՈԱԿ - թերություններ չի հայտնաբերվել:

8.Մշակույթի կենտրոն ՀՈԱԿ- Խորհուրդ է տրվել լրացուցիչ եկամուտ ստեղծելու համար, որոշ խմբեր դարձնել վճարովի, ինչպես համայնքի ներսում, այնպես էլ հարևան համայնքերում կազմակերպել վճարովի համերգներ ու թատերական ներկայացումներ, կինոդիտումներ:

9. Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ -կատարել խրոնոմետրաժ և ճշտել գազով աշխատող մեքենաների մեկ կիլոմետր վազք կատարելու համար ծախսվող գազի նորման: Վարչական պատասխանատվության ենթարկել այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, ովքեր աղբը հեռացնում են ինքնակամ ձևով:

10.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ապարանի տարածքային բաժին - Խախտումներ և թերություններ չի հայտնաբերվել:

Աուդիտի ենթարկված կազմակերպություններում կոպիտ տիպի խախտումների, վատնումների, չարաշահումների և հափշտակումների երևույթներ չեն հայտնաբերվել և որևէ նյութ չի փոխանցվել իրավապահ մարմիններին:

Թվարկված թերություններն ու բացթողումները մասամբ վերացվել են, առաջարկություններն ու խորհրդատվություններն ընդունվել են ի գիտություն:

Աուդիտի ենթարկված միավորների ղեկավարության կողմից ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Աուդիտի աշխատանքները կատարվել է քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից, որում ընդգրկված է մեկ աշխատող (ներքին աուդիտի բաժնի պետ), որը մասնակցել է <<ներքին աուդիտի որակավորման բարձրացման>> դասընթացներին և հաջողությամբ հանձնել թեստ և համարվում է ներքին աուդիտի որպես որակավորված ներքին աուդիտոր:

2015թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված բոլոր միավորները ենթարկվել են աուդիտի:

Քաղաքապետարանի ենթակայության միավորների գործունեությունը կարելի է գնահատել լավ, քանի որ միավորներում բարձր հիմքերի վրա է դրված ներքին հսկողության գործընթացների հուսալիության մակարդակը:

Նախորդ տարիների ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված թերությունների ու բացթողումների համեմատությամբ դրանք զգալիորեն նվազել են, բոլոր կազմակերպություններում առկա են զգալի դրական տեղաշարժեր:

Ստուգումների ընթացքում կազմակերպություններին ցուցաբերվել են նաև անհրաժեշտ մեթոդական օգնություններ:

Կատարված ստուգումների վերաբերյալ կազմված արձանագրությունները ներկայացվել են համայնքի ղեկավարին, նրա կողմից կազմակերպվել են քննարկումներ, տրվել են անհրաժեշտ գնահատականներ և հստակ հանձնարարարականներ, որի հիման վրա ըստ գործողությունների ծրագրերի տրվել են ժամկետներ արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Սույն հաշվետվությունը ներկայացվում է լիազոր մարմնին և համայնքի ավագանուն, որը հանդիսանում է նաև ներքին աուդիտի կոմիտե:

Կից՝ տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակները՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 856-Ն և 2012 թ փետրվար 17-ի թիվ 143-Ն հրամանների պահանջի:

Ներքին աուդիտի բաժնի պետ Ռ.Հարությունյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), Ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 10 -Ն

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀհամայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 25,01,2016թ-ի թիվ 7 եզրակացությունը, և ղեկավարվելով ՀՀկառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 50.1-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդհոդվածի 20-րդ կետի և ՀՀհողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Քաղաքացիների սեփականություն հանդիսացող 0,3956 հա գյուղատնտեսական նշանակության արոտների նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության, հետևյալ հողատարածքները՝

- 0204-0292 ծածկագրի՝ 0,1 հա,
- 0204-0212 ծածկագրի՝ 0,06 հա,
- 0204-0218 ծածկագրի՝ 0,1015 հա
- 0204-0222 ծածկագրի՝ 0,1341 հա:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել «Քաղաքաշինության մասին» ՀՀօրենքի 14^3 –րդ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել հերթապահ քարտեզում և ՀՀօրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀԿառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունը:

3.Փոփոխվող հողակտորների սեփականատերերից եռամսա ժամկատում գանձել տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը:

4.Փոփոխված հողակտորները պետական գրանցում ստանալուց հետո ընգրկել 2016 թ հողային հաշվեկշկում:

5.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վ. Սուքիասյանի վրա:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գուգիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ,Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 11 -Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 0,0202 ՀԱ ՀՈՂԱԿՏՈՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետով սահմանված դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող 0706-0002 ծածկագրի 0,0202 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողակտորի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության:

2.Ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողակտորը տարիներ շարունակ օգտագործվել է որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության:

3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վ.Սուքիասյանի վրա:

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գուգիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 12 -Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, Տեղական ինքնկառավարման մասին՝ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն համարվող 0.10491 հա հողամասը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:
Հաստատել վաճառքի մեկնարկային գինը և հավելաճի քայլը՝ համաձայն աղյուսակի:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովելու աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Աղյուսակ

Հողատարածքի հասցեն	Ծածկագիր	Հողատեսք	Մակերես /քմ/	Մեկնարկ գին--դրամ	Հ/ՔԱՅԼ	Կառուցապատ-ման նպատակը
Մ. Բաղրամյան 64/7	0138-0102	Բնակ/հաս	1049,1	682.000	36.000	Հասարակական

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գուգիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 13 -Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնկառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող հողմասերի գործառնական նշանակությունները /հողատեսքերը/ փոխել՝ համաձայն աղյուսակի:
2.Քաղաքապետին՝ ընդունել համապատասխան որոշում և նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր հողամասերի գործառնական նշանակության փոփոխման ուղղությամբ:

Աղյուսակ

N	Հողերի հասցեն	Ծածկագիր	Մակերես /քմ/	Փաստացի հողատեսքը	Փոփոխվող հողատեսքը
1	Գայի 30/1	0089-0035	56	Բնակավայրերի այլ	Հասարակական կառուցապատման
2	Գրիբայեդովի 2/3	0137-0021	263,2	Բնակավայրերի այլ	Բնակելի կառուցապատման
3	Լուսավորչի 42-44	0121-0203	400	Բնակավայրերի այլ	Բնակելի կառուցապատման

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գուգիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ,Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 14 -Ա

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Ապարան քաղաքի մի խումբ բնակիչների դիմումները՝ իրենց հարկային արտոնություններ տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության ,,Հողի հարկի մասին'' օրենքի 10-րդ հոդվածների պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1 Ապարանի համայնքի ներքոհիշյալ բնակիչներին տալ հարկային արտոնություններ՝ զիջելով նրանց հողի հարկերը՝ համաձայն հավելվածի:

Հավելված

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

	Ազգանուն, անուն	ՀՈՂԻ ՀԱՐԿ		Հիմնավորում
		Ապառք	Տույժ	
1	Սարգսյան Սարգիս	0	12362	Սոց.անապահով, աշխատող չկա, երկու անչափահաս երեխա
2	Անդրեասյան Յուրիկ	40825	17292	Չունեն աշխատող, սոց.անապահով, գտնվում են ծայրահեղ վատ վիճակում
3	Միրզոյան Ռազմիկ	22581	13918	Սոց.անապահով, ԲՈՒՀ-ի վճարովի համակարգում սովորող երկու երեխա

Ավագանի՝ Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գուգիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ N 15-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով քաղաքային գրադարանին նոր գրադարակներով ապահովելու պատճառով այլևս չօգտագործվող հին մետաղական գրադարակները օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությունը..

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ ուղղակի վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող մետաղական գրադարակները՝ թվով 161 հատ, յուրաքանչյուրը՝ 5.000 դրամ արժեքով:

2. Գրադարակների վաճառքից գոյացած միջոցները մուտքագրել համայնքի ֆոնդային բյուջե:

Ավագանի՝	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)

Գուգիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան